ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՆՐԱՔՎԵԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 հունվարի 2017թ. N 7 -Ա

ք.Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 20-Ի ՀԱՆՐԱՔՎԵԻ ՔՎԵԱԹԵՐԹԻԿԻ ՆՄՈՒՇԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Հանրաքվեի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածին և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովը ***որոշում է.***

1. Սահմանել Արցախի Հանրապետության Սահմանադրության նախագծի վերաբերյալ 2017 թվականի փետրվարի 20-ի հանրաքվեի քվեաթերթիկի նմուշը (կցվում է ):

2. Սահմանել, որ Արցախի Հանրապետության Սահմանադրության նախագծի վերաբերյալ 2017 թվականի փետրվարի 20-ի հանրաքվեի քվեաթերթիկն ունի սպիտակ գույն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՔՎԵԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ Ս.ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ

*Ն Մ Ո Ւ Շ*

# ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## Հ Ա Ն Ր Ա Ք Վ Ե

## ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կ.Տ.

## Ք Վ Ե Ա Թ Ե Ր Թ Ի Կ

« 20 » փետրվարի 2017թ.

Համաձա՞յն եք,

որ հանրաքվեի դրված Արցախի Հանրապետության Սահմանադրության

նախագիծն ընդունվի որպես Արցախի Հանրապետության

Սահմանադրություն

Նշումի համար

| | Նշումի համար |
|---|---|
| ԿՈՂՄ ԵՄ | |
| ԴԵՄ ԵՄ | |

Քվեարկության մասնակիցը, եթե համաձայն է ընդունել հանրաքվեի դրված հարցը, քվեաթերթիկում նշում է կատարում «Կողմ եմ» բառի դիմացի դատարկ քառանկյունում, իսկ եթե համաձայն չէ՝ «Դեմ եմ» բառի դիմացի դատարկ քառանկյունում :

Նշումը կատարվում է միայն **V** ձևի նշանով:

«Դիզակ պլյուս» ՍՊԸ տպագրատուն